Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զվերոյ գրեալսն ի սմա առհասարակ և ընդ սոցին զիս՝ պանարժան տրուայ Աւետիս գծողա: Տերեսս անկեալ աղաչեմք պատուածասէր հոգիք, որք հանդիպիք յայ/սըմ աստուածային տառիս՝ ծաղկաւեր բուրաստանիս, յիշեսցիք ի Քրիստոս պազմամեղս և պօնողն իմ՝ զԳրիգորն և զՀովսիսիմէն, և պորդին իմ զՊետրոսն, և ամենայն մերձատրքս:

Запись сохранилась по-видимому без заключительной части.

ИВ, В 171—377

**Маштоу, 1685 г.,  
д. Гулестан, переписчик Давит**

Փառք [...] որ եր կարողութիւն րկար ոգոյ Դաւիթ իրիցո л. 229 а  
անպիտանի մեղօք պառապեալ և չարեօք ի լի սղալագիր և  
պանարունսր գրչի, հասանել ի աարար սուրբ գրոցս, որ կոչի  
Մաշտոց, որ ունի բովանդակ վէ (7) խորհուրդ սուրբ եկեղեցոյ,  
ի երկիրս Բարդայ, ի գեօղս Գուրսարան, ընդ հովանեաւ Սուրբ  
Աստուածածնին և Սրբոյն Մինասայ, ի հայրապետութեան րանս  
Աղավանից րեանն Միմօնի և Երեմիայ, իշխանութիւն Պարոտ  
երկրիս ապառեալ Դուլիխանն: Որ յայսմ ժամանակի Հաճիայի  
խանն երաւ Թարիկոյ բազում զօրօք և եկեալ նսրաւ Գանջայ ի  
թվիս Հայոց ՌՃԼԴ (1685), ի խնդրոյ աստուածասէր և  
բարեպաշտ կնոջն Շահումին յիշարակ իւր և ծնողայ իւրոյ:

ИВ, В 84—321

**Книга вопрошений Григора Татеваци.  
1686 г., переписчик Маргар**

Գրեցաւ Հարցմանց և պարասխանագիրս ձեռամբ Մարգար л. 120 б  
իրիցոյն, ի թվականիս Հայոց ՌՃԼԵ-ին (1135/1686 թ.),  
հոկտեմբերի ամսոյ Ե-ին (5), Ե-շաբթի (5) օրն աարարեցաւ:  
Աստուած բարով վայելել րացէ՝ խոճայ Աւետիքին մինչ ի խորին  
ծերութեան եւ իւր ծնողայն արխայութիւն պարգևէ Զրիստոս  
Աստուած մեր: Ով եղբայրք, ով ոք կարդալով կամ օրինակելով  
յիշէ և կամ ի մէջ սուրբ պարարագին յիշէ, ինքն և իւր ննջեցեալն  
յիշեալ լինի առաջի Աստուծոյ մերոյ. ամէն:

Հայր մեր որ յերկինս...

ИВ, В 73—310

**Книга вопрошений Григора Татеваци,  
1687 г., Истанпол, отец переписчика Еремиа**

Յիշարակարան սրապոդիս. Որդի Երեմիայի որդոյ л. 480 б  
Մարտիրոս իրիցոյ Կոստանդնուպօլսեցոյ Գրիգորիս  
վարդապետ ԺԹ (19) ամաց լեալ էառ վկարգ կրօնատրութեան  
և ԻԴ (24) ամաց լեալ՝ րան վիշխանութիւն վարդապետական:  
Որ և քայլեալ յԷջմիածին վերելսայրի բեմբասապոթիւնսն առաջի  
պարոյս եպիսկոպոսայ և ռաբունապետայն հնոց և նորոյ:  
Ապա ի Սուրբ Կարապետ անցեալ վԿարնով և բազում քաղաքօք  
իբրև դիմեալ գայր յԻստրանայօ: Եւ մեր ոչ զգացեալ զգալուսր  
նորին կրսերաւ իմով Մաղափայի հասաւ յԷջմիածին եւ Գրիգորիս  
րաբունիս մրանէ յԻստրանայով ոչ հանդիպելով միմեանց: Եւ

\* Оставлено пустое место.

կայեալ մեր անդ ի պարճառէ Աստուածաշնչի միոյ ծաղկելոյ, արգելեալ մնացի և եւ ընդ Մաղափայի վասն վճարեայ: Եւ երբ եկաք յԻսպանացոյ, դարձեալ ոչ գտաք զԳրիգորիս վարդապետ, զի գնացեալ էր յԵրուսաղէմ:

Որ և ճանապարհին սուր քիսկոնեայ կոչեալ դուրսան փռանկ անողորմաբար և խսրասրտութեամբ աւարեալ սնան և ԼԳ (33) օր գերի ևս պահեալ տանի ընդ կղզիսն մերկ և չհաւոր, անօգնական և պանդուխտ. յորոյ հապի վերծեալ, այնպիսի դատարկաձեռն ոչ ախորժէ գնալ յԵրուսաղէմ, այլ դառնալ յԱլմաի և ի Սպարթա՝ բազում վշտով յեղանակս ձմեռան ցրտոյ սաստկութեան մինչև պշունչ առեալ յԻկոնիոն: Որ պօսն փրկարար պսակի կենարարին մերոյ արարեալ մխիթարութեամբ, առաւել և ի Գաղապոհա: Յետ վարագայ Սրբոյ Խաչին տօնի եհաս յԻսպանացոյ՝ լցով խնդութեամբ հասեալ ըղձանայ մերոյ ՌՃԼԶ (1136/1687 թ.) թվականիս, որ ՌՃԻԸ-ին (1128/1679 թ.) էր ի մէնջ հեռացեալ ի կրօնաւորութիւն և դարձեալ լնոյր վեկելեցիսն մշտաբարով վարդապետութեամբն՝ ի մխիթարութիւն ամենեցուն բարիժ քաղաքավարութեամբ: Եւ ուր ուրեք սրացեալն էր զգիրք ի հալալ արդեանց յաշխատանայ քարոզութեան իւրոյ, խնդրեայ ի մէնջ պամենիցն իւրաքանչիւրոյ ըստ արժանեայ՝ յաարտ նոցին գրել պիշատակս իւր, զոր և կատարեցաք իսկ և իսկ: Որպէս և տեսանի սրացեալս կոչեցեալ Գիրք հարցմանց ի Գրիգոր Տաթևացոյ պաղաքերեալ:

Արդ, որք հանդիպիք ի սիրելութիւն վերոյ յիշեցեալ գրոյ սրացոյի տեսն զԳրիգորիս քաբունոյ՝ ընթեռնելով, տեսանէ // ա. 481 ա լով և օգտելով ի սմանէ, յիշեսցիք ի հեշտալոյր յաղօթս ձեր, զի ընդ երկայնատրութեամբք և բարոք կենցաղավարութեամբ վայելեսցէ զսա ի հաճոյս Տեառն եւ ընդ արթուն ծառայիցն և ընդ բարի մշակացն առցէ զվարձս փոխարինի առաքինութեան իւրոյ յամենակալ Տեառնէ, որ խոստացաւ սիրելեայ իւրոյ պապիւի ուրախութեան մոծանել ի փառս յանգուական յաւանութիւն, զորոյ գովութիւն խորոցն անձառից հասողն և յափշտակեալն յերոքոյր յերկինս ոչ կարայ ճառել գրեթէ միայն յայսմ եզերեայ սրանս իւր, թէ զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեայ Աստուած սիրելեայ իւրոյ [1 Կոր. 2, 9]: Որում և դուք յիշեցեալ լիջիք յարքայութեան Տեառն ըստ բաղձման երանելի աւագակին յաջակողման Տեառն, յորժամ գայցէ փառաւոր լինիլ և փառաւորել զսիրելիս իւր ամէնօրինեալ տեսլեամբն զուարճանալով ամենայն ուղղափառ հաւատարացելովք. ամէն:

Գրեցաւ յԵրեմիայէ՝ հօր տեսն զԳրիգորիս վարդապետի:

77

ИБ, А 24—137

*Шаракноу, 1687 г.*

ա. 142 6 Իշատակ է Նորիսաթունին և որդուն նորայ՝ սարկաւարք Խաչայտրին, և հօրըն նորայ՝ Ակորին, և որդուն նորայ՝ Միլոնին, և մորըն նորայ՝ Կուլվարդին, տէր Խաչայտրին, և հօրըն՝ Գրիգորին, ի թիվ]ս Շառոյ ՌՃԼԶ (1136/1687 թ.).

РНБ, арм. н. с. 1—13

**Четвероевангелие, 1688 г., [Нор Джулай],  
переписчик Хо́чик, владелец Гаспар Джулайеци**

**a**

ՋԽՈՃԻԼ, րէր Խաչարտորի որդի, մեղապարտ գրչիս յիշել ի ա. 87 6  
Տէր, և Աստուած զձեզ յիշէ ի միսանգամ գալստեան. ամէն:

**6**

[Յ]իշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ով սուրբ ընթերցող, ա. 88 a  
զստացող սուրբ Աւետարանիս՝ Յուդայեցի պարոն Քասպարն,  
որ եր իւր վաստակոյն և ստացաւ զսուրբ Աւետարանս յիշատակ  
իւր հոգուն, և պարոն Սիմոնին, և Քասպարին կենակցուն և  
իւրեանց դեռաբոյս և նորաբողբոջ դստերացն՝ Սառային,  
Սիրմային և Մանանային, և այլ ամենայն արեան մերձատրաց  
իւրեանց:

Արդ, երես անկեալ աղաչեմ զձեզ, որ հանդիպիք սմա  
կարդալով և կամ օրինակելով, յիշեսցիք յաղօթս ձեր զվերոյգրեալ  
պարոն Սիմոնն, և զպարոն Քասպարն և զկենակիցն իւր՝  
զԱննան, և զդստերսն իւրեանց, և դուք յիշեալ յիշիք յԱստուծոյ  
մերմէ. ամէն: Հայր մեր, որ յերկինս:

Ով եղբարք իմ նազելի և պարտելի, ով ոք կամեսցի ծախել  
զսա կամ գրաւ դնել և կամ զկարդարանն՝ զխաչն և զարծաթն՝  
վրայէն հանել, նա մասն Յուդայի առնու և պարիծն Կայենի  
կրեսցէ. ամէն:

ԹՎԻՆ ՌՃԼԷ (1137/1688 թ.) ամին ստացաւ զսուրբ  
Աւետարանս պարոն Քասպարն, և եր իւր հալալ վաստակոյն  
և ստացաւ զհոգելիս բուրաստանս. ամէն:

Упомянутые в записи крест и серебро утрачены вместе с  
переплетом.

РНБ, арм. н. с. 10—22

**Четвероевангелие, 1688 г.,  
Սոփ (Ասփախ), переписчик Йовханнэс.**

Փառք [...] // Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս յերկիրն Շօշ, ա. 333 6-  
334 a  
որ է Ասպախան, ի դռն Սուրբ Ամենափրկչի, ձեռամբ հոգնամեղ  
և անարժան Յովհաննէս քահանայի. անմեղադիր լինիք կամ  
սխալանայ, կամ խռշտրանայ, զի այս էր կար մեր: Ոչ էի արժան  
զսա գրել, սակս ձրի գրեցի, թողութիւն շնորհեցէք մեղատրիս: Ի  
թագատրութեան Պարսիս շահ Սուլէյմանին և ի հայրապե-  
տութեան րեառն Եղիապար խարապնազգեաց կաթողիկոսի և  
հովուապետութեան ահրի քաջ քաբունապետի, հեզահոգի և  
բարեւոսոյ րէր Յոհաննի. Աստուած զինքն անփորձ պահեսցէ.  
ամէն:

Ի թվականութեանս Հայոց ՌՃԼԷ (1137/1688 թ.) և ապրիլի ամսի ԺԲ-ումն (12): Արդ, ի խնդրոյ բարեմիտ և երկիտայ առն Սստուծոյ պարոն Ակորջանի, որ ըս/տայալսս պտորք Անտարանսս ի հալալ վաստակոյ իրոյ և յիշատակ իւրն և իւր ծնողայրն. յիշեցէ և Սստուած ողորմի:

л. 334 б

Գարձեալ, յիշեցէ վայարոն Յակորջանն և պիայ//րըն՝ Բաղդասարն, մայրն Մարի տարն, և կողակիցն Խանումն, որդին իւր Բաղդասարն, Բաղդասարի կողակիցն Մարամ տարիկին, հանգուցեալ որդին իւր Գրիգորն, դուստրն Մարամ տարիկին, եղբայրն Սահրաւրն, Սահրաւրի կողակիցն Մարիամ խանումն, որդիւն Գրիգորն, Հէրապետն, միիւս եղբայրն Սարգիսն և կողակիցն Սիմէն, և դստերն Նորջիանն և հանգուցեալ դուստրն Նորմիալն, փորն Սինախաթունն, կողակիցն Պօղոսն, որդին Գալուստն, դուստրն Բէկպարէն, միւս փորն Խանումաղէն, կողակիցն Յովանէսն, որդին Ջանբաբէն, հօրեղբայրն Յովանէսն, կողակիցն Եղսաբերթն, հանգուցեալ որդիւն Մանուկն, Յեարին, Մնացականն, դստերն Վարթախաթունն, Բէկումն, Խաթունն [...]

Конец записи отсутствует.

80

ИБ, А 50—163

Сборник, 1688 г., Лори,  
д. Ованис, переписчик священник Григор

л. 52 а

Ի թուականիս Հայոց ՌՃԼԷ (1137/1688 թ.) գրեցաւ տեւորս ձեռամբ տէր Գրիգոր ֆահանայիս ի երկիրն Լօռուն, ի գիտն Ովանիս, Հայոց տեառն Եղիապար և մերոյ ահրեայիսկոպոս Սանահնու՝ Բարսեղ. ամէն:

81

ИБ, В 113—350

Маштоц, 1689 г.,  
последующий владелец Петрос

л. 186 б

Շնորհիւ ամենապօրին Սստուծոյ, ես նուաստ տէր Պետրոս առա ՎՄաշտոցս ի հալալ ընչից իմոյ. հայրն իմ՝ Պային և մայրն իմ՝ Թաճումն, և կողակիցն իմ՝ Մարիամն, և որդիւն իմ՝ տէր Եսային, Պակլարն, Պօղոսն, Պային, և դուստրն իմ՝ կուսակրօն Եփրեմսիմային և Մաշան, և Ակուլն, և Հոռոմն: Վասն որոյ, ճվ հարք և եղբարք, որք հանդիպիք սմա կարդալով կամ [ի]արևանցի ինչ, յիշեցէ յաղօթս ձեր զվերոյգրեալսս և մի բերան ողորմի ասացէ տէր Պետրոսին և այլ ննջեցեալսն. ամէն:

Գրեցաւ թուին ՌՃԼԷ-ն (1138/1689 թ.):

л. 187 а

Գարձեալ յիշեցէ վտէր Եսային և իւր լծակիցն՝ Ակուլին և որդիւն՝ Սինասն\*:

Այլ և յիշեցէ Պեակլարն և իւր կողակիցն՝ Աղախանն, և որդիւն՝ Չալին:

\* Пропущена строка.

РНБ, Дорн 641—11

**Сборник, 1693 или 1694 г., Шóш (Аспахан),  
переписчик Астуацатур Фахрапатци**

Շնորհոփ, զօրութեամբ, կարողութեամբ և ազդմամբ ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, եւ՝ թշուառ անձին Աստուածադուր արեղայս, խօթայեալ հոգովս թէպէտ եմս ժիր մարմնով // սկսեալաւորեցի մեղսաներկ մաւրամբ զգիրս արդաւնոյ, որ է յոյժ պիւրանի, քաջ և իմաստուն տրամաբանողական ճարտասանայ, ի թուին Փրկչին ՌՋՃԴԴ (1694 թ.), իսկ ի թուահաշութեանս Հայոց Մեծայ ՌՃԽԲ (1142/1693 թ.) ամին, ի վայելումն անձին իմոյ, ի յարայանիստ մայրաքաղաքիս Շօշ կոչեցելոյ, որ այժմ Ասպահան վերաձայնի և ի գիտաքաղաքի Նոր Քուղայոյ ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչի վանացս, ի հայրապետութեան // Տեառն Նահապետի երիցս երանեալ կաթողիկոսի Ամենայն Հայոց և առաջնորդութեան Նորո Քուղայոյ Մարտիրոսի աստուածաբան և երջանիկ վարդապետի, ի թագաւորութեանն շահ Սուլէիմանին:

Արդ, յերես անկեալ աղաչեմ զսրբապանսդ, որք հանդիպիք ամա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մահաւախ յաղօթս ձեր զվերոյգրեալ եղկելիս, որ եմ Ֆահրապապուցի, և զծնօղն իմ: Եւ դուք, յիշօղք, յիշեալ լիջիք ի Բրիստոսէ Աստուծոյ մերմէ յաւորն որդւրնդոստ գարնանային յարութեանն, որ զայոյ է դարել զկենդանիս և զմեռեալս: Եւ նմա փառք յաիպեանս. ամէն: Հայր մեր [...]: Անմեղադիր լերոք գրոյս խոշորութեան, զի կար մեր այսֆան էր:

ИБ, А 13—126

**Сборник, 1693 г.,  
правщик вардапет Закариай Испаханаци**

a

Առաքրեցաւ դուզնաքայ Ջերականութեանս արիեստ յոքնամեղ իմա//ստակէ Յովանէս յանարժան վարդապետէ Իսպահանայոյ, ի գեղջէ Քուղայոյ, ի թվայրերութեան Հայոց Մեծայ ՌՃԽԲ (1142/1693 թ.), յամսեանն յունվարի ԻԴ (24): Եթէ հաճոյ թուեսցի սրբապանիցըս, միօվ Հայրմերով յիշեսցիք, զի և դուք յիշեալ լիջիք ի գիրն կենաց:

б

Ով բարեմիտ ընթերցօղք, յիշեցէք ի մահաւախ յաղօթս ձեր զսրբազրոյ տառիս Ջահրիայ վարդապետըն, և դուք յիշեալ լիջիք առաջի Բրիստոսի. ամէն:

Имя переписчика Ջահրիայ было стерто, и восстановлено уже К. Костаянцем, в коллекции которого оказалась рукопись.

ИВ, С 39—419

**Синаксарь, 1694 г., Карс,  
переписчик Еремиай**

л. 474 а Յիշարակարանն է.

Փառք[...] Որ եր կարողութիւն Կրկար և անարժան և մեղօք մեռեալ անձինս՝ Երեմիայ գրչի, հասեալ յաւարտ յայսմ արեւնի, քանզի ունի սա զբոլոր տարին յինքան հաւաքեալ Հոռոմոյն բաժան ամիսս եւ ըստ Հայոց երկուրասան ամիսս և Ե (5) օր ատելին՝ զամենայն տօնից տէրունականացն և զսրբոց նահապետացն, զնախահարցն, զմարգարէիցն, զառաքելոցն, զհայրապետացն, զհանաւայիցն և զսարկաւազացն, <զառաքելոցն>, զճգնաւորացն և զկուսանացն, զկանամբաց, զմարտիրոսացն, զծերոց և զտղայոց, զշափու հասակի, այլ և երկնային զօրացն, զաթոռոցն, զսերոբէիցն և զհերոբէիցն, զօրութեանցն և զիշխանութեանցն, զպետացն և զպետութեանցն, զիրեշտական և զիրեշտակապետացն: Պատմութիւն կարծրագոյն տանջանացն և սքանչելեացն անաշխարհիկ վարույ սրբոցն աստ հաւաքեալ կան, որ օրըստօրէ սրբաբնոյցն և սոսկացնէ զոսկերս լսողացն և դարձուցանէ առ ի յունկնդրութիւն անոր՝ մտաւորաց, զոր և սիրաւարտի տենչմամբ և եռափափագ ըղձմամբ սրտի սրացաւ զանառիկ մեծութիւնս և զպայծառութիւնս սրբոյ եկեղեցոյ և զխրախոսութիւնս մանկանց ուսումնասիրաց, հաւատարիմ պարոն Յակոբն՝ յիշարակ իւրն և ծնողացն՝ Յովասափին, մօրն Մանուշակին, կենակցին Բաղդարին, որդոցն Թովսմանին, Սարգիսին և Յոհաննին, և թոռին Մնացականին, և հարսներն իւր Հերիփն և Հայպաթին, և հարապատ եղբարցն իւր Յոհաննին, Կիրակոսին, Պետրոսին և Պողոսին, քերն Դօլվաթին, և այլ ամենայն արեան մերձաւորացն:

Արդ, և դուք պատուական և քիստոսադաւան քահանայք և ժողովուրդք և այլ եկեղեցականք, որք նստիք ի յունկնդրութիւն սուրբ գրոցս, և այլ կարդացողք և օրինակողք, յիշեցէք զսրայցող սորա՝ զպարոն Յակոբ և զծնօղսն իւր զվերայգրեալսն և զայլ ամենայն մերձաւորսն՝ զկենդանին և հանգուցեալսն: Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց և անկարգս ի կարգաւորաց, սուրանուն Երեմիայ քահանայ, տեսի զսէր և զփափաք սորա զպարոն Յակոբին, զոր ունէր առ հոգեւորսն, և իմով իսկ տկարութեամբս յանձն առի և կարարեցի ողորմութեամբն Մատուոյ, բազում աշխատութեամբն հասի յաւարտ սուրբ գրոցս: Դարձեալ յիշեցէք զիս՝ անպիտան և փանաքաբան, տղմասէր և մեղօք ներկեալ Երեմիայ սէթեթ էրէց, որ բազում տառապանօք յանկ ելեալ կարարեցի զսա ի թվիս Հայոց ՌՃԽԳ (1143/1694 թ.), ի մարտի ԻԶ (26), իշխանանիստ քաղաքիս Կարնու, ի հայրապետութեան Որֆայեցի տէր Նահապետ սրբապան կաթողիկոսին, եւ ի ժամանակի թագաւորութեան Տաճկաց Սուլթան\*: Բայց աղաչեմ ի վայելողացոյ յիշել զիս՝ զփծուն ծրօղս և զուսուցիչ և հայրն իմ

\* Пропуск

վրէր Աթանասն, որ հան[գ]ուցեալ է առ Քրիստոս, և զմայրն իմ՝ Դովաթն, և զկենակիցն իմ՝ զԴիմաթն, և զամենայն մերձառոսն մեր՝ զկենդանին և զհանգուցեալսն: Ջոր և խնդրեմ // ի վայելողացդ և ընթերցողացդ և կրկին գաղափարողացդ յիշել միով ողորմայի զսրապօղ սորին՝ զպարոն Յակոբն՝ իրայնովն և մեզ գծագրողն՝ մերայնովն: Ջի ի ծրելն սորա շար վիշտ և րատապանս կրեցաք վասն միայն լինելով և անօգտակար, զի հայրն իմ հանգեալ առ Քրիստոս և ես միայն եղբարքս իմով կայաք ի մէջ երկրի խեղճ և անտէր. և ես ուրախ լինէի ի վերայ եղբօրն իմոյ, զի էր Ժ (10) տարոյ Թորոս անուն. զի դեռ ևս նորահաս եղեալ էր ի դպրութեան ժամադրեղաց, և նա իւր տղայութեամբն գնացեալ ընդ տղայսն ի խաղալ ի ձորն, որ է բերթին\* յերևն, և վասն ապումանէ չարին և վասն ծովացեալ մեղաց իմոյ, անկեալ ի քարն ի վայր և մեռաւ: Ջի և անպերժանելի սուք հասոյց մօրն իւրոյ և ինձ ծաղր և նախապիւնս արար թշնամեաց իմոյ: Միայն յոյս ունիմ առ Քրիստոս և զՄարիամ մայր Աստուածածին, որ բարեխոս է ամենայն մեղատրաց որ փրկեալ ապարեացէ զիս զմեղատր և ամենեցուն ուրաց կոխան Կերեմիայ ի սարանայական որոգայթից և ի գեհ[ն]եան հրոյն փրկեացէ: Ոչ թէ միայն զիս, այլ և դասակից եղեալ քահանայքն՝ զվրէր Թորոս ալեօք ծերացեալ և վրէր Սիմէոնն և վրէր Ներսէսն և վրէր Դուկասն և զվրէր Եսայի եղբայր մեր: Ջոր և յառաջմէ յեկեղեցին փոքր գոլով շար նեղութիւն ունէաք վասն փոքրութեան ժամադրեղաց: Յերոյ Աստուծոյ ողորմութեամբն և յաջողութեամբն գնացեալ Այվազ շէլէպին բազում աշխատութեամբ փաշայիցն և աղաներուցն հրաման և բոյրութիւն առեալ, շինեցին մեծ և հռչակատր եկեղեցիս յանուն Մորք Աստուածածնի, որ յառաջմէ մեծ խորան կայր. և այս Գ (3) խորան ձևացեալ գոհութիւն Քրիստոսին, որ այսպիսի դառն և ի նեղ ժամանակիս այսպիսի լուսավալ եկեղեցի շինեցաւ ի մերումս ժամանակի, ի վերայ Ախուրան գետոյ. և յեր սորայ զկամորջն նորոգեցաւ: Դարձեալ տեղիս հովիւ և առաջնորդ Դանիէլ վարդապետ, որ է ի յերկրէն Ամթայ, եկեալ բնակեցաւ ի վանքն Հոռոմոսի, որ այժմ ասի Դօշավանք, որ ի վաղուց ժամանակէ աւերեալ և քայքայեալ էր. հովիւք և խաշինք բնակէին ի միջի նորա: Որ և սա Դանիէլ վարդապետս տեսեալ այնպիսի հռչակատր եկեղեցիսն, արտասուս հարեալ և յանձն ի մահ մատնեալ, շինեալ հաստատեաց զլուսայարկ զեկեղեցիսն. Աստուած հաստատուն պահեացէ: Ջոր և մաղթեմ ի սուրբ ընթերցողացդ՝ անմեղադիր լինել աղաքանաց մերոյ և սակս խոշորութեանն սորա թողութիւն շնորհեցէք, զի կար մեր այս էր:

Դարձեալ մաղթեմ եղբարցդ իմոյ յիշել զվերոյգրեալ զսրապօղ և աշխատող սորա և զամենայն երախտատրսն մեր՝ զկենդանին և զհանգուցեալսն: Եւ նա որ առաւրն է ի տուրս բարեաց և ձեզ ողորմեսցի իւր միսանգամ զալստեանն, յորժամ զայցէ փառօք Հօր և հրեշտակաց սրբոյ. ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Ср. примечание \*\* к № 49.

\* Просторечная форма слова բերդ (крепость), но возможен и топоним, как полагал О. Еганян.

ИВ, В 98—335

**Сборник, 1697 г., Стамбол (Константинополь),  
переписчики Барсел-Басилиос и Атанас**

а

а. 200 а Եւ ընդ ամին զիս ամենաեղեռ սուրանուն Բարսեղ պաշ//  
 а. 200 б րեակս ծրօղ աղօթիցս, նաև զարքասէր րաբունի վԱթանաս  
 եղբայր վարդապետս, որ ի միասին գնացին Երուսաղէմ, աղաչեմ  
 ի մաքրափայլ յաղօթս ձեր յիշեսցիք և զրեալ աղօթումն, որոց և  
 ձեզ մասն ի Քրիստոսէ լիցի սրբոցն ի լոյս: Աւարտեցաւ  
 ծաղկափայլ քարոյս ի Ստամբուլ արինեալ մայրաքաղաքի, ի  
 ժամուն Սուրբ Լուսատրչին, յորում նախախնամօղն ամենայնի  
 Քրիստոս հասարակուն պահեսցէ զհաւանայսն և զիշխանն և  
 առհասարակ մեծ և փոքր ժողովուրդն: Մեք բազում քարոյցեցաք  
 և նոքայ սիրով ընկալան Քրիստոսի սիրոյն և մեզ լաւ հարկիս  
 արարին, Աստուած արինէ զիրեանք, աստի կենացս անփորձ  
 կենօք պահեսցէ և հանդերձեալն արքայութեան արժանացուցէ:  
 Գրեցաւ ի Հայկապեան ՌՃԽԶ (1146/1697 թ.) թուոց, յունիս ամսոյ  
 Դ (4) զրաւ եղև:

б

а. 261 б Ջկազմող և կապող ժողովածոյ քարոյ մարենոյս յիշեսցիք  
 յԱնապարցի զՄիքայէլ շնորհապարդ և հեզահոգի, աղբարասէր,  
 մարդասէր, հիւրասէր ծաղկարար և պարկերահան փրայցուն  
 հանդերձ մարմնատր ծնողով և հոգևոր վարպետօք և ուսուցչօք  
 և ամենայն արեան առու մերձաւորօք. յիշողք թարց  
 ձանձրանալոյ յիշեցեալք լիցիք ի Քրիստոսէ Յիսուսէ յԱստուծոյն  
 մերոյ, որ է արինելոյն յաիւրեանս. ամէն:

Դարձեալ, ով ընթերձողք, երկակի հարապարացս բանի  
 պաշտարեկացս Բասիլիոսի և Աթանասի բազում աշխատանս  
 արար և մանաւանդ կերակրօք և ըմպելօք, վասն որոյ փոխարէնն  
 միտն հազարապարիկ և բիւրապարիկ ժրեմք տալ ի նմա և  
 հաւուցանել Քրիստոսի յուսոյն մերոյ ներկայս աստի  
 աշխարհիս և հանդերձեալ կեանսն. ամէն:

Գրեցաւ ՌՃԽԶ (1146/1697 թ.) թուին ի սուրբ Երուսաղէմ  
 ձանապարհին, ի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսի. ամէն:

86

ИВ, А 78—191

**Симэон Джулайеци, Грамматика, 1701 г.**

а. 109

Թիւ գրգուկիս աւարտեցման՝  
 զոյգ շրջանիկ, եզ յորելեան,  
 և մակեռակ քառապարկեան,  
 քառիկ դարձեալ և մու հլսան:

Игра в числа с определением даты  $(2 \times 532) + 50 + (3 \times 4) + 4 + 420 = 1150$ . 1150 г. армянской эры соответствует 1701 г. нашего счисления (О. Еганян).

87

ИБ, А 111—224

**Псалтырь, 1701 г.,  
Нор Джулай, переписчик Авет**

Փառք[...] Արդ, գրեցաւ այսմ հոգելի գիրքս, որ կոչի *л. 288 а*  
Սաղմոսարան, ի դուռն Ամենափրկչի սուրբ վանացն որ է Նոր  
Ջողայու, ի թուականութեանս Հայոց Մեծայ ՌՃԾ-ունն (1150/  
1701 г.) յամսեանն արամ\* ԻԲ (22), զորս յիշատակեցաւ այս  
սուրբ գիրքս խօջայ Խաչիկին, ևս կողակցին իր Խաթունմամէն,  
և զորդիսն իր խօջայ Աղածաբորն ևս կողակցին իր  
Խաթունոսկումն և զորդիս նորին պարոն Աղայմալն և  
զկողակցին իր Վէլիդա խանումն // և զորդիսն իր խօջայ *л. 288 б*  
Նապարն և զխօջայ Աղածաբորն, ևս Դուալիմսի և զդսպերսն  
իր Մէրդապ խանումն, զոր և հայցեմք ըստ իրեանսն Տէրն  
Քրիստոս ընդ երկար ամօք պահեսցէ անփորձ և անսասան  
և փրկեսցէ ամենայն որոգայթից սարանայի: Մանաւանդ  
զհանգուցեալսն ի Քրիստոս զծնողսն զխօջայ Խաչիկն և  
զԽաթուն մամէն ևս խօջայ Աղածաբորն և զնսկումն խաթունն  
և զիրեանսն ինքն Քրիստոս արժանաւորեսցէ անթառամ  
պսակացն և ընդ երանելեաց սրբոցն դասեսցէ և իր տեսոյնն  
արժանի արասցէ և հանդերձելոց բարեացն հասուցցէ. ամէն:

Դարձեալ կրկին անգամ յիշեցեմք ի Քրիստոս զխօջայ պարոն *л. 289 а*  
Աղայմալն որ ցանկացաւ ի հալալ վաստակէ իրմէ և ետ գրել  
զՍաղմոսարանս որ իր հոգոյն և իր հանգուցեալ ծնողացն  
յիշատակ, մանաւանդ և իր որդոցն: Այլ և հայցեմք ի Քրիստոս  
զկենդանին անփորձ պահեսցէ և յերկար ամօք պահեսցէ և  
հանգուցեալն ի Քրիստոս ընդ դասս աջակողմեանն դասեսցէ ի  
հանդերձեալ կալարածի ատուն. ամէն:

Արդ, և ես սուրանուն Աւետոս երես անկեալ աղաչեմ *л. 289 б*  
ընթերցողացդ, զի փոքր] հասակաւ և արամք շաղախեալ բազկօք  
կալարեցի մարգարէութիւն անյաղթ // փիլիսոփային Դարթի,  
այլ և անմեղադիր լերոյք ի սխալմանէ և գրչին խոշոր և մանր  
գրոցն. զի անկալար դիտաւորութեամբ գրեցի: Եթէ հաճեսցիք  
միով հայրմեղայի յիշել ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք ի  
Քրիստոսէ. ամէն: Հայր մեր որ յերկ[ինս]:

88

ИБ, А 64—177

**Молитвы и заклинания, 1704 г., Ван,  
переписчик Йарутюн**

Փառք[...] որ ետ կարողութիւն տկար և անիմաստ սուրանուն *л. 147 б-148 а*  
Յարութեան հասանել ի յաւարտ յայսմ տառիս, որ կոչի

\* Յամսեանն Արամ ան. Արաշ ? Переписчик мог спутать название шестого месяца армянского календаря Արաշ с третьим днем месяца Արամ.

ա. 148 6 Ուրբաթագիրք, լաւ և ընդիր օրինակէ: Որք հանդիպի սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի // մաքրափայլ յաղօթս ձեր պանարժան գրծօղս՝ Յարութեն, և պիմ ծնօղ վարպետ պթումա էրէցն, և մայրն իմ, և ամենայն արեան մերձաւորն մեր. ամէն:

ա. 149 a Գրեցաւ սայ ի քաղաքն Վան, ընդ հովանեաւ Սուրբ Էջմիածնայ և Սուրբ Գէորգայ Ջօրավարի, և Սուրբ Սանդղ//խորդ կուսին և Թաթնո Սուրբ Առաքելոյն, և Թովսմանուկ սուրբ աւետարանին, և ամենայն սրբոյ, որք ասար կան հաւաքեալ և ի պահպանութիւն ամենայն հաւաքացելոցն. ամէն:

ա. 149 6 Արդ, աւարդեցաւ Կառս, որ կոչուաւ Ու[ր]բաթագիրք ի թվականիս Հայոց ՌՃԾԳ (1153/1704 թ.) ամին, ի մայիսի ԻԳ (23), և Սրբեղծ// ողին փառք յափրեանս յափրենից. ամէն:

ա. 150 a Դարձեալ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք աստուածասէր կնոջն Գօլպաին և իւր ծնօղացն, իոր Հայրապետին, մօր՝ Եամամին, կողակցին Բարսղին, մօր Զնուշին, որդոյն Յովանիսին, դստերացն Ըռիխանին և Դօստաղին, քուր//ացն Սառին և Մահմուտին, և ամենայն արեան մերձաւորացն: Լի սրտիւ և բոլոր հաւաքով ասէք Աստուած ողորմի իւրեանցն. ամէն:

Եւ Գօլպա գնեցի Կսուրք Ուրբաթագիրքս հալալ ընչից իմոյ և ռիսի արի ի դռն ընձայից Սուրբ Աստուածածնին՝ յիշ[աբ]ակ հոգոյ իմոյ և ծնօղաց ///

Нижняя половина листа оборвана, на л. 150 б (верхняя половина) благопожелания повторяются.

Вторая часть записи выполнена по-видимому другой рукой.

**Книга вопрошений Григора Татеваци,  
Константинополь, 1710 г., владелец тэр Саргис**

ա. 381 6 Դարձեալ աղաչեմ զձեզ, սուրբ հայրապետք և վարդապետք, հայրք և եղբայրք իմ, անմեղադ[ր]ելի լինել մեզ, պի եւ Սարգիս վարդապետս, որ եմ յերկրէն Կալիկիոյ, ի գիտաբաղաւէ Հաճընոյ. ՌՃԾԹ (1159/1710 թ.) էր թվական Հայոց, և Կեսի պայս Հարցմամ գիրքս որպէս գերի անկեալ ի մեծ քաղաքն Կոստանդինուպոլիս, ի Մեծ Վէսիր Խանին, ի ձեռն ըրաճկաց, և սիրտ իմ դալարեցաւ վասն այս գրիս, և եւ էի ի մէջ նեղութեանն, ապա Աստուած ապաւինեցայ և առի պայս Տաթևացոյ Հարցման գիրքս Ի [20] մառչիլ՝ ի վայելումն անձին իմոյ և յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց, և ամենայն պարմից իմոց, և ամենայն յարեանառոյ մերձաւորաց իմոց, և Կուսույիչն իմ՝ Կրէր Սահակն, զվ[ե]ին իմ՝ զՈվանէս կաթողիկոսն, ի նոյն գիտաբաղաւէն Հաճընոյ և Տանն Սրսա, յիշել մաղթեմ և հայցեմ ի ձեզանից, որք հանդիպի կարդալով կամ տեսանելով կամ օրինակելով, յիշատակելով, աղաչեմ զձեզ Աստուած ողորմի ասէլ և մի խնայել: Աստուածն

ամենայնի, որ առարն է ձեզ և մեզ ողորմեսցի իր միսանգամ  
զալսրեան. ամէն:

90

РНБ, Арм. о. к. 1<sup>1</sup> и 12—70

**Չашоյ, Каменец-Подольский, 1711 г.**

Ճաշու գիրգս այս է յիշարակ եկեղեցւոյն Սրբոյն Նիկողայոսի 1<sup>1</sup>, л. 281 6  
սփանջեալործ հայրապետին ի Կամենից ֆաղափ, որ գրեսցաւ ի  
թվին Հայոց ԾՂԸ (798/1349 ռ.) և յամի Տեառն 1349, յերկիրն  
Ղրիմայ, ի ֆաղափն Սուրխաթ, ձեռամբ տէր Ստեփաննոսի իրիցո:  
Իսկ յետ ԽԵ (45) տարոյ գրելոյն գնեաց զսա կամենցի պարոն  
Սինանն, որդի Խութուպէի, և ետ յիշարակ վերոյասացեալ  
եկեղեցւոյն Սրբոյն Նիկողայոսի ի թվին ՊԽԳ (843/1394 ռ.) և  
յամի Տեառն 1394 օգոստոսի ԺԵ (15): Այս պարոն Սինանս իւր  
յարուկ դրամովն շինեաց վնոյն եկեղեցին Սուրբ Նիկօլայոսի ի  
թվին Հայոց ՊԽԷ (847/1398 ռ.) և Տեառն 1398, որպէս յայտ է ի  
կոնարակէ շինելութեան նորին եկեղեցւոյ, որ ի *նաղուշն* մեր  
պահի, և սկսանի այսպէս. Այս իմ կամաց և հաւարարութեան  
անձին ձեռագիր է՝ Սինանի որդոյ Խութուպէի [...]\*

Իսկ ի թվին Հայոց ՌՃԿ (1160/1711 ռ.) և յամի Տեառն  
1711 գիրգս այս կազմեսցաւ, բաժանեցեալ յերկուս հարորս վասն  
դիրագոյն տանիւոյ և բերելոյ, ձեռամբ տեառն Ստեփաննոսի  
Ստեփաննեան Կամենցացւոյ, տէֆանի Կամենիցոյ, Սդանիսլա-  
վովիոյ և այլոց ֆաղափաց, որ և յաւել զԸնթերցուածս և  
զԱնտարանս կարգաւորեալս ըստ արարողութեան ուղղափառ  
եկեղեցւոյն Հայոց:

Ի փառս մեծագոյնս Աստուծոյ և Ե. Կ. Մ.\*\*

91

РНБ, Дорн 638—8

**Календарь, 1715 г., переписчик Давит**

Յիշարակ է լուսայեղոյ Խօջամալի որդի Սափարին թիվն л. 2 а  
ՌՃԿԴ (1164/1715 ռ.) մարդի Բ (2), ձեռամբ մեղավոր էրէց  
Դավթիս: Եւ արդ, եղև սկիսքն գրոյս թին ՌՃԿԳ (1163/1714 ռ.)  
դեկտեմբերի Ը-ումն (8), զծայգրեցի և զՌՃԿԴ (1164/1715 ռ.)  
թվին մարդի Բ (2) հասուցի յավարտ: Ազնեա, Հոգի Սուրբ  
Աստուած:

92

ИБ, В 104—341

**Толкование Игнатия на Евангелие от Луки,  
Сис, переписчик священник Лазарос**

Փառք [...] Գրեսցաւ զայս Մեկնութիւնս ի Տիկրանակերտ л. 332 6  
ֆաղափս ի ձեռամն տէր Դաւարոս ֆահանայի արհեստարար

\* Далее следует запись 1394 г., см. № 17.

\*\* Далее лат. перевод. Ишатакаран повторен в части 1<sup>2</sup>, л. 11 а.

գրչի, որոյտյ տէր Կիրակոս ֆահանայի, որ և մեք ի նոյն ուղիղ գեղեցիք օրինակէն, և սրբագործեալ որոյ ոչ աւելի և ոչ պակաս էր, և էր գրեցեալ յերկիրն Կիլիկիոյ, ի <ի> սահմանքս Տանն Միսոյ, ի հապար հարիր վաճսուն և վեց Հայոց թիւ, հայկապեան տօմարի ՌՃԿԶ (1166/1717 թ.), ի հովապետութեան տիրայկառոյց, արփիպսնցուդ Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, արիական գրվխոյն և սրբազան հայրապետին տեառն Սստուածաւորոյ գերերջանիկ կաթողիկոսին Ամենայն Հայոց:

1717 г. относится к ишатакарану и не является датой рукописи.

93

ИБ, В 26—264

### Толкование Григора Тагеваци на Евангелие от Матфея, 1722 г., Балю, переписчик Саргис

а. 318 6 [...] /// Նոյնպէս և Սուրբ Հոգոյն տոգորեամբն արարեալ Քաղուածոյ մեկնութեան Աւետարանին Մատթէոսի՝ սուրբ վարդապետն մեր Գրիգոր Տաթևացին Զ (6) հաւոր իւր Վ (4) գեւոյն Եղեմարուիս բաղդաւորութիւն առ ի յուսումն վկնի եկելոյն հաւաքեալ քաղուածու մեկնութեանս: Վասն որոյ փափագող եղև յայսմ մատենիս հեղափոխ և բանիբուն քաջ հոգեւորն Բսահակ վարդապետն: Եւ գրեալ եղև սա ի քաղաքին Բալուայ, ընդ հովանեալ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեծ եկեղեցոյն, ձեռնպորտեամբ և հոգաբարձութեամբ մեծ իշխանին Ասնաւորին և եղբօրն իւրոյ՝ պարոն Գրիգորին:

Արդ, եղև պրաւ սորայ ի թվաբերութեանս յաբեղական տօմարիս սեռիցս Հայկայ, ըստ Մովսէսի դրութեանն ՌՃՀԱ (1171/1722 թ.) ամին, սկիպրն եղև ի յունիս ամսոյ Թ (9) և ի սեպտեմբերի Ժ և Ե-ին (15) աւարտեցաւ շնորհիւ Տեառն Սստուած, ի վայելումն նոյնոյ Բսահ/ակ սստուածաբանութեան վարդապետի, աշակերտի տեառն Վարդանայ սրբոյն մեծի հանգուցելոյ Բաղիշեցի, որ և Սստուած վնա ընդ բաժին վարդապետս դասեսցէ. ամէն: Ի հայրապետութեան տեառն Սստուածաւորոյ կաթողիկոսին, որ ի Վաղարշապատ, եւ ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղեմի տեառն Գրիգորի երանաշնորհ վարդապետի, երկրորդ Լուսաւորչի, որ և Բաղիշեցի, ի նոյնոյ շառաւիղէ, տիեզերալոյս մեծ վարդապետին Վարդանայ, որ և աջն անեղին Սստուածոյ պահեսցէ պապաւոսական հայրապետն մեր, զախոյեանն ձգնարութեան զվերոյգրեցեալ ըզտէրոյ մեր ի պարծանասս տառապեալ ազգիս մեր Արամեան. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զվերոյ գրեցեալ խօճայ Ասնաւորն և փիւր եղբայրն՝ զխօճայ Գրիգորին, և փիւրեանց արինեալ որդիին՝ զՄարտիրոսն, զտիրացու Սսլանն, և զՈվաննէսն, և զՅովաննէսն, և զՄիրզան, որ յոյժ երախտաւոր եղեն մեզ և օգնական յամենայն կողմանցն, և Սստուած զձեզ յիշէ իւր արքայութիւնն. ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս

վմիահաղոյն ուխտ սուրբ եկեղեցոյն՝ վմահանայք և պժողովուրդն, որ յոյժ սէր և բարեկամութիւն արարին ընդ մեզ: Դարձեալ, յերես անկեալ աղաչեմ կողկողագին պաղարանօք, որք հանդիպիք այսմ սուրբ գրոցս կարդալով կամ օրինակելով և կամ վմայլիք անծայրածաւալ ծովէս և փարթամանայք յանծախսելի զանձնու՝ յիշեցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր պիարապատ և պիղկեոր եղբայրն իմ զԿէր Աւետիք հեգահոգի և սրբակրօն քահանայն և զիս՝ պետրեալ և զանայիկան ծառայս զփծուն Սարգիս էրէցս, որ զանունս միայն ունիմ և զ/գործն ոչ: Որ յոյժ աշխատութեամբ գրեցի զայս սուրբ գիրքս ի քարաշխարհ՝ ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ Կարապետին և Խանումին. և դոք յիշեալ լինիք ի Զրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն:

Դարձեալ, կրկին աղաչեմ, վերստին յիշեցիք ի սուրբ յաղօթս ձեր զուսուցիչն իմ զԳրիգոր եպիսկոպոսն միով հայրմեղայի, և դոք յիշեալ լինիք ի միայնոյն Աստուծոյ. ամէն: Հայր մեր:

94

ИБ, А 38—151

**Шаракноц, 1724 г., Ті́хис,  
заказчик переплета Минас**

Ով տեսարք իմ և եղպայրք, յիշեցէ առ Տէր մեղաւոր Մինաս էրէցս և ծնօղս իմ, վասն զի տեսի այս սուրբ Շարակնոցս վաղուց հին թագաւորաց, որ ոչ ճանաչեմք յայժմ, և ես վերստին կապմել ելաւ ի ժամանակս օսմանցոց, որ կալեալ ունին քաղաքս Տիփլիս, և կաթողիկոսութեան Աստուածաբանութիւն, և դառն ժամանակի, թ[ուին] ՌՃՀԳ (1173/1724 թ.):

95

ГЭ, V3 834—463

**Четвероевангелие, 1725 г., Эрзерум,  
автор записи Мурат, сын Пилоса Тагошенци**

Յիշատակ է սուրբ անւարանս արարումցի Թագոշենց Փիլոսի որդի Սուրարին և մորն\* ի դուռն Մալքութլու Սուրբ Լուսաւորչի վանքին. ով ոք որ զայս անւարանս արշտակէ կամ գողանայ, մասն ի Յողայէ առնու. թվին ՌՃՀԴ (1174/1725 թ.):

96

ИБ, В 58—296

**Новый Завет, 1736 г.,  
Энкиври, переписчик Елиазар**

Լուսիկու վէ մերիամէթի իլէ էփէնդիմիզ Յիսուս Զրիստոսըն եազըլըպ թէմամ օրդու պու Նոր Կրակարան էրմէնի վէ թիւրքի տելիլէ Ալլահիմիզ Յիսուս Զրիստոսըն միւրվէթինէ վէ կենդի պափր վալիտէսի կոյս Մարիամըն իպէթինէ վէ ճէմի փիլաս

\* Пропуск

Էվլափոլէրինին լապիմէթինէ (խուսուսա Էնկիւրի իսրէ) վէ փաֆ ու ապիպ, սալէի, վէ էմին խուսփամը Քրիստոս էփէնփրիմիպին՝ Կէր Կարապէտին թալապ էդիպ իսրէմէսի հասէպիլիէ, ֆի եապփրփրփր կէնտրի հալալ մալրնփան, վէ պէն խաֆր Եդիապար Կախի պայիփ մփրարիմէ կէօրէ թուճ էրմէիպ, եապփրմ իֆի շէրիգ Կիլիլէ: Իմփրի թէճա իսրէրիմ ճիմլէնիպէ, ֆի պու թէփարիգի օգոյուպ նէմիրիսին կէօրուրսունճուպ, պիֆր էփէսիպ սէպէպի Կէր Կարապէտի վէ խուսփամը Եդիապարը: պիֆր Հայր մեր իլէ. սիպլէր Կախի պիֆր օլասըպ օմրլէր Կէփփփրինիլէ. վէ թաֆսիրաթիմէպէ մէղփուրէթ գլասըպ: Մապուր օլա. սաղ օլուլ:

Մէնէ 1736, նոյեմբերի 1, շէիրի Էնկիւրի իշրէ:

Текст на тур. яз. арм. графикой.

97

ИБ, А 117—А 118—228

**Сочинения Налаша Йовнатана, 1736—1737 гг.,  
Астапат, переписчик Абрахам Астапатеци**

л. 40 б Գրեցաւ Նադաշ Յովնաթանի ասացեալ ուրախութեանն և սիրոյ Կաղերս ի ՌՃՁԶ (1186/1737 թ.) թուին և յամսեանն սեպտեմբերի ԺԴ (14) ի գեօղաֆաղաֆն Մարապար, ձեռամբ Խաչատուրի որդի վարպետ եպիօքի Աբրահամին և ի վայելումն էլ Աբրահամուն: Տէր Մափուածն ուրախութեան և երկայն աւուրփ վայելումն Կացէ. ամէն:

Դարձեալ պայս վայելուչ Կաղերս ով ոք խնամով պահեսցէ, վարձս ի Քրիստոսէ առցէ: Նաև խնդրեմ ընթերցողի՝ յորժամ եղանակեն խրախութեանն Կաղերս, ի մի բերան ողորմի ասասցիք հանգուցեալ հօրն իմոյ վարպետ Խաչատուրին և պիս գծող Աբրահամս յիշեմ, և դուք յիշեալ յիջիք ի միսսանգամ գալստեանն Քրիստոսի, որ է օրինեալ միշտ յափտեանս. ամէն: Հայր մեր, որ յերկինս...

98

РНБ, Арм. н. с. 40—52

**Книга о сотворении мира,  
1743 г., Астапат, обновитель Абрахам**

л. 142 б Արդ, նորոգեցաւ գիրքս վերսփին հրամանաւ Կեառն Յովսէփայ գիփնական վարդապետի և առաջնորդի վանիցս Սրբոյն Սրտիփաննոսի Նախավկայի, որ յՄարապար, ձեռամբ Կէր Աբրահամ արեղային՝ նորին աշակերտի, իսկ կապմեցաւ ձեռամբ Սողոմոն սարկաւագի՝ նոյն վանից միաբանի, ուսփի մաղթեմ ի պա[րա]լիողայդ, պի յիշման արժանի առնիցէք վաշխափող սորին. ողջ լերուք:

Ի ՌՃՂԲ (1192/1743 թ.) թվոջ հոկտեմբերի Ժ (10) նորոգմանն եղև պրաւ:

**Четвероевангелие, 1747 г.,  
Нор Джулай, владелица Анна**

[...] Ըն[դ] վերջնոյ կրկնակի յիշատակարանիս: Յիշեսցի՛ л. 335  
վկերջին ստացող սրբոյ Աւետարանիս՝ սրբաբերոհմ և  
վեհապնտիի աստուածասէր Աննային և զհանգուցեալ զայր իւր՝  
զհեպահոգի և ողորմածասէր զպարոն Գրիգորն և Աստուծով  
զօրացեալ զպորոգիսն իւր՝ զպարոն Պետրոսն, զՊօղոսն,  
զՅովհաննէսն և զՄէթ աղայն, և զոշխտիի դուստր իւր զԵկապէտն,  
և զայլ ամենայն արեան մերձատրսն:

Դարձեալ յիշեցէ՛ ի Տէր զնոյն սրբաբերսէր և սրբաբաշխօն л. 335 6  
Աննային, որ ըստացաւ զսուրբ Աւետարանս, վասն զի ցանկացաւ  
ընդ մարմնականի զաւակացն ունիլ եւս՝ զհոգւեոր զաւակ ի  
սրբոյ յեկեղեցւոջ Կանն Աստուծոյ, յորում կացցէ յիշատակ  
մշտնջենական:

Զանպի լուեալ էր զպերանական բանս մարգարէին Եսայեայ,  
զոր ասէ. Երանի որ ունիցին զաւակ ի Միօնի և յընտանի  
յերուսաղէմ (Իս., 31, 9): Եւ այս յիրաւի գոյ, զի զաւակ  
մարմնական ոչ են յաւիտենական, իսկ հոգւեոր զաւակս այս է  
մշտնջենատր և յաւիտենական մինչ ի կատարած աշխարհիս:  
Վասն որոյ բազում փափաքանօք ստացաւ զաստուածաւանդ  
Կառն և զՅիսուսեան կրակս զողորմածասէր Աննայն և իւրոյ  
ամենայօծար կամօքն եւր վաղմ և յիշատակ ի հանրահոշակ  
յեկեղեցին Սրբուհոյ Աստուածածնի, որ ի Նորոյ Զուղայս  
յաստուածակերպեալ գոյ, զի լիցի յիշատակ յաւիտենական առ  
յապայս և հանդերձելումն:

Եւ դուք, արժանաժառանգք սրբոյ եկեղեցւոյ սրբապնագործ л. 336 a  
հախանայք և սպասատրք սրբոյ // Կաճարի Տեառն Աստուծոյ,  
զերիսս զայս և եթ մարթի ձեզ առնել ըստ *քրնտանայ* (?), նախ՝  
սիրով ընդունիլ զգանձս աստուածային և լաւ իմն խնամով պահել  
յամենայն վնասէ: Երկրորդ՝ զգուշանալ ի յանտողայից՝ մի լիցի  
զի հանցեն ի յիշատակագրութենէն վաճառելով կամ այլ իմն  
վնասի Կառով: Երրորդ՝ ըստ պատահմանն ամին յորժամ հանդիպիք  
յիշեսցի՛ ի Տէր Յիսուս զվերոգրեալ յիշատակակաւորս զԱննայն  
հանդերձ իւրայնօքն, զորս գրեցաք և յիշեցաք: Եւ դուք յիշեալ լիջիք  
միշտ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի. ամէն:

Ի թուականի Հայոց ՌՃՂԶ (1196/1747 թ.), ի հայրապետու-  
թեան Կոնստն Ղապարոյ սրբապան կաթողիկոսի և ի  
թագաւորութեան Պարսիկ Աղշահի բարեարար արքայի նորոյ:

Начало записи утрачено.

**Служебник, 1755 г., Каменец-Подольский,  
переписчик Оксэнтиос**

Յիշատակարան  
Թվին հապառ հարիր քառսուն ինն

л. 57 6

Ապրիլի ինն ի սուրբ Ջարկինն  
 Ծընայ վարմէն ի Խոսրովեանս,  
 Գրիգոր, Մարիամ ծնողայ հայեանս  
 Եւ ի նախնեայ Կամէնիցայ,  
Օֆսէնրիոս անուանեցայ:  
 Ամս ինն ուսայ գրոյ և կրօնին  
 Ի դըպրապանն սրբազնոյ փափին,  
 Աշակերտեալ առաջնորդին՝  
Վարդան րաբուն վարդապետին:  
 Նորընծայ ամս չորս ֆարոսիչ  
Կամէնցում առ Լուսաւորիչ:

101

ИБ, А 27—140

**Прокл Диадок, Богословские элементы  
 1757 г., переписчик Йарут'юн Полосеан**

ա. 185 а Փառլ[...] Արդ, ի ՌՄԶ (1206/1757 թ.) թուականիս Հայոց, եւ՝  
 ւրոպայս և պիւրակս, Ղայթմապեանս տէր Փիլիպպոսս, պի կարի  
 ցանկացող և փափակող եղէ պայս գրոյս՝ Պրոկլի Շաղկապիս,  
 ֆանսի ոչ գոյր ի ֆաղափս մերում ոչ դաս ասող, ոչ հեղինակ,  
 մինչև ի գալն սրբական հօր մերոյ և բանիրուն // փիլիսօփայի  
 ա. 185 б Ճահուկեցի Աւետիս ծայրագոյն եպիսկոպոսի: Յորժամ եկն ի  
 ֆաղափս նուիրակ և յառաջնորդ, ոչ ինչ փոյթ ունէր, բայ  
 ֆաղպածորան ֆարոսելոյ աստուածաբանութեան և հեզաբեր  
 դաս ասելոյ: Վասն որոյ և իմ յօժարեալ և յարհայեալ ի  
 ծերութեան [ժ]ամանակի պի յիսունամեայ գոլով՝ աշակերտեցայ  
 առն Աստուծոյ, և նա հեշտալոյս ոճի, պուարթ սրտի սկսաւ դաս  
 ասել ինձ միայն տրամաբանութեանս, որպէս պի տարակուսանս  
 լուծանելով անդուստ համարձակեալ իմ և ապառինեալ յոյսն  
 բնաւից, ըսկսայ թարգմանել ի վրայ ֆերականութիւնս՝  
 թախանձամբ Վրայ կաթողիկոսի Անտոնի, և յորդորմամբ և  
 օրհնութեամբ սորին աւարտ հասաւ որքան կարն մեր  
 վերաբերեայ: Յետ այնորիկ Պերի արմենիասն, հանդերձ  
Գրիգորի դեռաբոս աշակերտի նորին: Եւ յետ վախճանելոյ  
 լուսահոգի Գրիգորի, սկսաւ պայս Շաղկապս, Օրբելեան Բանէ  
 դիւանբեզի, Նիկողայոս ֆահանայի և Գէորգ դիակօնի: Եւ յետ  
 ուսանելոյ, տաժանմամբ գրել ետու հեզաբարոյ աշակերտի  
Պողոսեան գերիմաստ Յարութեան դարի, որոյ յիշատակն  
 յաւիտենական եղիցի և վարձն ի Ջրիստոսէ առնուցու. պոր  
 բազում ջանիւք և աշխատութեամբ գրել ետու պայտոսիկ՝ ի հալալ  
 արդեանս իմոյ, առ ի վայելումն ինձ թարմաւարիս, յիշատակ  
 իմ հոգոյս:

ա. 186 а Յաղագս որոյ աղերսանօք հայցեմ // և խնդրեմ հարցդ  
 սրբապանից եւ եղբարցդ մաքրագունից, պի յորում ատուր և ժամու  
 պարահեշգիփ յայս մարտնիս՝ տեսութեամբ, գաղափարութեամբ  
 եւ կամ ընթեռնելով, յիշեցիք միով հայրմեղայի պիս՝ փթեալ  
 ծերունիս հանդերձ ծնողիւք իմով և որդով և վերոյ յիշեցեալ

տէր Պետրոսի որդի Յարութենիւ և ամենայն ազգապոռհմիսն՝  
վննջեցեալսն և վկենդանիս մեր: Իսկ որ առաւրն է ի տուրս  
բարեայ՝ Քրիստոս Աստուածն մեր, ձեզ յիշողացդ եւ զմեզ  
յիշեցելոցդ ողորմեսցի իւր միսսանգամ գալստեանն եւ  
արժանատրս արասցէ զիւր երանական փաղսր ձայնին, որ ասէ՝  
Եկեալք օրինեալ էք հօր իմոյ (Մփ. 25, 34) և այլն: Որ է օրինեալ  
անպրաւ յաիտեանս յաիտենից. ամէն: Հայր մեր որ յերկինս  
հրամայեցէք:

102

ИБ, А 35—148

**Прокл Диадок, Богословские элементы,  
1764 г., пύстынь Лим, переписчик Йованнэс**

Փառք [...] Գրեցաւ գիրս, որ կոչի Պրոկոի Շաղկապ, ձեռամբ A. 216 6  
սուրանուն և մեղապա[ր]տ Յովաննէս ֆահանային, անուամբ  
միայն եմ, գործովս՝ ճշ, թիւն ՌՄԺԳ (1213/1764 թ.), որ եմք  
երկրէն Գաւաշու, ի գեղէն, որ կոչի Բաւրականց և ի մէջ Լիմայ  
սուրբ անապատին, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգայ Ջօրավարին:

Սրդ, աղաչեմ զձեզ, ով հայրք և եղբայրք, որ հանդիպիք սմա  
կարդալով կամ օրինակելով, յի սրբի ողորմի ասէք, և Աստուած  
ձեզ ողորմի այնմ ժամու, որ ասէ. Եկալք օրինեալ Հօր իմոյ  
(Մփ. 25, 34): Անմեղադիր լերով գրոյս. ամէն:

103

ИБ, В 82—319

**Четвероевангелие, 1766 г., Баку,  
поздний владелец Киракос Гапанци**

Փառք [...] Զվերջին սրացող սուրբ գրոյս, որ կոչի A. 250 a  
Աւետարանս, առայ Դաւիթանցի պարոն Կիրակոս ի հալալ  
արդեանց իմոց, յիշատակ ծնողաց իմոց հայրն իմ՝ Պաղտասարն,  
մայրն իմ՝ Կողմնակն, կողակիցին՝ Նապլուին, և որդոյն իմոյ  
Պաղտասարին, Գասպարին, ղսրերն՝ Անթառամին, Ռհանէսին,  
հանգուցեալ որդոյն՝ Մէլիումին, և ամենայն արեան մերձա-  
[ռ]րաց. որ երու յիշատակ, Գանջեցի տէր Դաւիթին որդի տէր  
Խաչատուրին. և որք հանդիպիք կարդալով կամ օրինակելով,  
վերոյգրեալ պարոն Կիրակոսին հանդերձ ծնողն յիշեցէք. յիշեալ  
յիջիք առաջի արեանին Քրիստոսի. ամէն:

Թվին Հայոց ՌՄԺԵ-ին (1215/1766 թ.) գրեցաւ փետրվարի  
ԻԴ-ումն (24), Բաբու:

104

РНБ, Арм. о. к. 12—70

**1767 г., Каменец-Подольский**

Յամի Տեառն 1756, օրն յունիսի 20, սկսաւ շինութիւն A. 1 6  
յեկեղեցոյս Կամենիցոյ Հայոց Սուրբ Նիկողայոսի և ասարտեցաւ

յամի Տեառն 1757, օրն առաջին յուլիսի շինութեան նոյնոյ յեկեղեցոյն:

Յամի Տեառն 1767, օրն 22 օգոստոսի, եղև բերումն թափօրով հրաշագործ պապկերին Երանոսոյ կուսին ի նոյն եկեղեցին:

Выше та же запись на польск. яз.

105

ИБ, А 56—169

**Сборник, 1767 г., монастырь св. Карапета  
в Ернджаке, сын Тамраза Ананиас**

1766-ումն, Հայոց ՌՄԺԵ-ումն (1215/1766 թ.), եւ Հաշտա-  
րիսանցի Թամրապի որդի տէր Անանիաս եկի Երնջակայ Սուրբ  
Կարապետն և թվին ՌՄԺԶ (1216/1767 թ.) և մարտի Ժ-ումն  
(10) Նախջիվան Երեմ խորանումն ձեռնադրվեցայ անարժանս  
հահանայ՝ ձեռամբ տեսուն Կարապետ երանաշնորհի և ծերագոյտ  
վարդապետի: Աստուած վայելումն տալէ ի բարին. ամէն:

106

ИБ, В 11—249

**Сборник, 1773 г., покупатель Аракед**

а

Այս հարուստի գիրքս, որ է մեծաբար[ոյ] Վարդան վարդապետին,  
եւ տէր Առաքելոս տեսի որ գողացեալ էին ժողովուրդն կու ծախէին  
և եւ առի առանց գնոյ թվին ՌՄԺԲ-ին (1222/1773 թ.)

б

Եւ անարժան տէր Առաքել յոյժ անատակ,  
Նաև չեմ առեալ վարժումն, գիտութեան եմ խակ,  
Կարդալսօղ գրոյս, յիշեցեմ սիս, որ եմ գործով տարդակ,  
Խնդրեմ ի Քրիստոսէ, որ ահեղ արեւնին չառնէ  
սիս խայտառակ:

Почерк второй записи отличается от первого. На л. 01 а и 95 б криптограммы: Տէր Առաքելոս գրոյ է և Ժր.

107

ИБ, С 29—409

**Библия, 1778 г.,  
Ахркалак, даритель Маргар**

Յիշատակ է Աստուածաշունչ սուրբ տառս Մարգարին և իր  
կողակցոյն, և որդոյն Յովսէփին, որ ետ իր հալալ արդեանցն  
յիշատակ իր հոգոյն ի դուռն Այսրփալաֆայ Սուրբ Աստուածածնայ  
եկեղեցին՝ ձեռամբն աւաք տէր Արաքիամին, թվին ՌՄԺԷ-ին  
(1227/1778 թ.). Աստուած լուսաւորէ իր առ հասարակ  
ննջեցելոյն հոգոյն. ամէն:

ИБ, С 29—409

Библия, 1783 г., монах  
Й[о]всэһ

а

Յօվ որ հարցանէ, թէ այս Աստուածաշնչիս գրօղի անուն, Գրիգոր աստուածաբան վարդապետն է գրել, Հայկապարայ Սուրբ Նշանին յիշատակ ա տվել: Օվ [ո]ր կարդա, ամենայն բերան ողորմի ասէ, Աստուած ողորմի ասողայ հոգոյն. ամէն:

Գրվեցաւ ՌՄԼԲ (1232/1783 г.) օգոստոսի ԻԳ (23), ի ձեռամբն սոսկ տէր Յ[ռ]վսէվհին վանական զեղբարն ի վր յ[ի]շէցէ, և դոմ յիշայլ լինիջիմ գալստայն ի վրում. ամէն:

б

Օման խանն, որ էկավ Լօռի բերթի թվին ՌՄԼԲ (1232/1783 г.) մախի մուրն

ИБ, В 29—267

Степанос Шахумеан, История Давит'-бэка,  
1787 г., Змюрин переписчик Даниэл

л. 69 б

Սակաւագին ճառս վիպական  
Վիպէ պարարս քաջին Դաւթեան  
Որ ի յԱբրանդ տան Սինական  
Վասն հաւարոյ քրիստոսական,  
Ղօղեալ ելով ի խորշ անկեան  
Ի տան մեծի քաջապարմեան  
Աստուածապօրոյ մեծ Ապրօեան  
Յորմէ առաք պապարճէն սորայն՝  
Ձեռամբ Դանիէլ չնչին դռարի  
Յօրինակեալ գծագրի  
Ի ծովերեայ մեծ քաղաքի,  
Որ է Զմիւրին անուամբ հրճոյի:  
Եռամ բառիկս առ թեզ կալեալ,  
Զգայարանդ վեցապարկեալ  
Երբ թին Հայոց տեսցես յայտնեալ  
Լեր ի յաղօթադ զիէզս յիշեալ:

Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք յափտեանս. ամէն:

Расшифровка даты: 5+1000+1+200+(5×6)+551=1787 г.  
(О. Еганян).

ИВ, В 48—286

**Сборник, 1791 г., Դարս**

ա. 186 Յիշարակ է մարեանս որ գոչի Կրակ Յիսեան, պարոն առ Տէր գնացել[ալ] ///

Արդ եղև վկաւ Կարին,  
ՌՄԽ-ին (1240/1791 թ.), յունվարին թվին,  
Ի ժամանակս մահ Կարաժամին,  
Ջոր Աստուած ապարէ Ղարս քաղաքին:  
Տաճկաց Ճ (100) սարակէին,  
Հայից Լ (30) մեռանէին,  
Մինչև սրբոյ Աթոռէն Դ (4) մասունք բերին:  
Աստուծով փարաւեցաւ. ամէն:

ИВ, А 9—122

**История Александра Македонского,  
1792 г., Карин, автор записи Йоханнэс**

ա. 85 а Աշխարհակալ արքային Աղէքսանդրի Մակեդոնացոյ պարմագիրքս, որոյ պթերին լրացուցեալ մարուցաւ ի հրճուանս մեծարգոյ իշխանապետ Ասլան աղայի, բարեժառանգ որդի շնեղաշոք Կարապետ աղային, յորմէ այժմս պարգևեցաւ Բասենու Պաշգիւղցի բարեհամբաւ մահերեսի Գէորգ մեծի և գիւրնական դպրի, որպէս զի ի յընթեռնու և ի յըսթանու իւր՝ սովաւ մշտապէս աղօթս արասցէ վասն կենաց վերոգրեալ յարգելեաց, ընդ որոց, եթէ դէպ և արժան համարիցի, յիշեսցէ և զիս՝ պերնեալ ծառայս նոյն պարտուելացն պաշտօնեայ Յօհաննէս չպէտ նօսարս, որ զսոյն բան գրեցի ի ՌՄԽԱ (1241/1792 թ.) թուոջս և յուլիսի Ե (5), ի քաղաքս Կարին:

Издание текста: Симонян 1989, с. 89.

РНБ, Дорн 31—1

**Шаракноц, 1814 г., Санкт-Петербург,  
даритель Йарутюн Валааршапатци**

ա. 402 Ընծայեցի սոյն Շարականս ի Հասարակաց գրհարունս Ռուսարայ կայսերութեան ի թագաւորութեանն ամենայն Ռուսարայ Աղէքսանդր յառաջին և հայրապետութեանն Հայոց Եփրեմ յառաջին, որ եմ Յարութին Վաղարշապատցի, ՌՄԿԳ (1263/1814 թ.) թվին:

Записи с приблизительной  
или сомнительной датировкой

113

ИБ, С 29—409

Библия, 1298 г. (?), Млич,  
заказчик Григор Аревелци

а

Բարեխաւութեամբ սուրբ և ընտրեալ վնահաւրական որ  
կաւարեցան վասն Բո, Զրիստոս Աստուած իմ, ողորմեան  
ստացողի մատենիս Գրիգոր անարժան արեղայի և ծնաւոյս  
իրոյս և եղբարս և ամենայն պարմիս իրոյս, և սիրելի եղբարս  
իմոյ Վանական վարդապետի և Բարսեղի սրբասնեալ Բահա-  
նայի: Ով եղբայր, յայսմ ատուր անարէն ազգն Հագարու, որ  
կոչի Դարաման, զոր վանեսց[է] և կործանեսցէ վնա տէր  
Աստուած մեր, եկն այրեաց զսուրբ ուխտն Միհճի և գերեաց  
զաշխարհն ամենայն և տարաւ. որոյ փրկեսցէ վնոսա տէր  
Աստուած մեր, և զմեզ ի սաւրանայէ և զձեզ, որք ոգտիք ի սմանէ.  
ամէն, եղիսի:

л. 205 б

б

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կաւարեցի  
զգիրս զայստսիկ՝ յիշատակ ինձ և ծնողայ իմոյ: Արդ, որք  
ընթեռնոյք կամ արինակ առնոյք, յիշեսցիք զԳրիգոր վանարժան  
արեղայ ի մաքրափայլ և յարժանատու յաղաթս ձեր, ընդ նմ[ին]  
և զերջանիկ վարդապետն զՎանականն և զբարեբարոյ  
զեղբայրն իմ՝ զԲասիլիոս և զծնաւոսն իրեանս յիշեսցէք ի  
Զրիստոս, և զխոշորութիւն գրոյս թողութիւն շնորհեցէք, զի  
այսչափ էր կար մեր:

л. 220 а

Ջոր արինակ նաւ խոռովեալ փութա ի նաւահանգիստ, նոյնպէս  
և գրիչն ի վերջին գիծն: Յայսմ ամտոյ նահաւարեցաւ թագորդին  
պարոն Թորոս և սպանաւ յեղբարէ իւրմէ, որոյ ողորմեսցի  
Զրիստոս Աստուած և հանգուսցէ յերկնիսն արքայութիւն և  
զվերջին մնացեալն ի խաղաղութիւն պահեսցէ. ամէն:

в

Արինեալ է Աստուծոյ անչափ մարդասիրութիւն, որ ներեաց  
ամենաթշուառի յանդգնութեան, և վայ է ինձ, որ պոյժ պիտանին  
ինձ ի բաց եմ թողեալ՝ զխոստովանել մեղացն և զողորմել  
աղաւորին, և զսիրելն զընկերն, և զոչ բարկանալն տարապա-  
րուոյ, և զջերմեռանդ արդաստաւ աղաթն, և միայն զգերելոյս  
զփոյթն ունիմ և ոչ զգիրս հրամանացն կաւարումն. և կարի  
վրանգիմ ի յաւարարութիւնս և ի պանդխտութիւնս, զի ի գործոյս  
իսկ երևի, զի խիստ ճարտար կու գրի, թէ Աստուած ճանապար[ը]ի  
տա, որ երթամ առ իմ ծնողսն: Այլ վառեալ իմ ի յայս յոյս, թէ որք  
հանդիպիք գրոցս, ազնուի յիշէք սրտի մտաւ զանարժան  
աշխատողիկս, որ այսպիսի բազում տառապանաւ վասն  
րկարութեան և պանդխտութեանս, և փստն գրով ձաբարեցի:

л. 341 а

Այլ թէպէտ և է խոշորագույն գիրս, այլ արինակն լաւ է, զի ի Գորգ պարդապետին\* արինակէն է, և նա յոյժ աշխատեցաւ ի բովանդակ Սստուածաշունչ գիրս և պայծառապոյս նախադրութեամբ և գլխահամարով, զի դիւրաւ գրանիցեն բանի խնդրաւոյնս զինչ կամիցին:

Արդ, աղաչեմ զհանդիպեալսդ, յիշեցէք սրբի մտաւ զԳորգ վարդապետ և զգոյն երիցանց զարինակիս շնորհատա: Այլ և զիմ անարժանութիւնս զԳորգոր Արևելցիս, ծնատաւն իմով և ամենայն պարմիւք, և որք աշխատեալ են ի յիս ուսմամբ և խրատու, և Սստուած իւր շնորհէ ողորմութիւն՝ որ մեզ խնդրէ ողորմութիւն ի Քրիստոսէ. ամէն:

Как было отмечено в описании рукописи (№ 409), возможно, что данный иштатакаран воспроизводит частично или полностью записи 1298 г.

114

ԴԶ, АР—1011—468

**Библия, кон. XIII—нач. XIV в.,  
Киликия, переписчик и художник Йусэп**

л. 30 б Զատուածասէր պարոն Սմբատ զորդի ի Քրիստոս հանգուցեալ սպարապետին Հայոց Լևոնի աղաչեմ ի մեղաց թողութիւն իւր և ծնողաց իւրոց. ընդ նմին և զանարժան գրիչս Յուսէփ աղաչեմ թողութիւն մեղաց հայցել յՍստուծոյ ինձ և ծնողացն իմոց և զոտղն թողութեան թողցէ և ձեզ պանցանս ձեր. ամէն:

л. 122 б Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ անարժան ծառայի և սուրանուն քահանայի և փցուն գրչի Յուսէփայ և ծնողաց և պարմից իւրոց, ամէն, և Տէր ձեզ ողորմեսցի և խոշորութեանս անմեղադիր լերուք, զի շրապով կու գրէի վասն արինակին որ չէին ի թողուք:

Записи переписчика см. также л. 49 а, 50 б, 63 б, 82 а, 98 б, 110 а, 151 б, 166 а, 276 а, 427 а/69 а, 446 а/88 а, 457 б/99 б, 475 б/117 б.

115

ИБ, В 60—298

**Йовханнэс Ванакан. Толкование на кн. Иова,  
XIV в. (до 1387 г.), переписчик Йакоб**

а

л. 107 а Զմեծ ներրապաւիւրն\*\* և զմաջ րաբունապետն, զառաւրաձեռն և զառաւրամիւրն և զթարգմանող Հին և Նոր կրակարանայ զտէրն Արեւիաննոս յիշեցէք ի Տէր Յիսուս, ո՞վ ոք որ հանդիպիք այսմ տառիս:

\* Բմ. վարդապետին.

\*\* Բմ. մերրապաւիւրն.

Չանարժան և պտուրանուն գրչակս վՅակոբս աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս, ով ընթերցող: ա. 266 6

Աղաչեմ պամենեսեան ով որ հանդիպիք այսմ գրի ընթեռնուկ կամ արինակել՝ չմեղադրել գրոյս և սղալանացս, ևս առաւել պարհիական գրուխս: ա. 278 a

ИБ, В 11—249

**Сборник, XIV в., заказчик ԹԵՏԱԿԵՏ**

Քրիստոս Աստուած, սուրբ առաքեալս և անբարանչիս Յոհաննու սիրելոյն և Պրոխորոնի բարեխաւսութեամբ թողութիւն շնորհեաւ սրապողի գրոյս Ըռստակիսի քահանայի և ծնողայ իրոյ, և ամենայն արեան մերձատրայ, ապգականայ, և ինձ՝ նուաւր, թարմաւար գրչի, և կարդայցողայ, և լսողայ, և հաւաքով ունկնդրողայ, և ինչ փառք յամենայն ապանց: ա. 271 6

Бликие по содержанию записи см. также на л. 21 а, 40 а, 97 б, 108 а, 116 б, 148 б. и др.

ИБ, А 37—150

**Сочинения Нерсеса Шнорхали, XIV в.**

Ջամենայն արինութեանց արժանատրսն վԱվաք պարոն՝ վայելող գրոյս, և զիրսն ամենայն, նաև պարդարամիտ և զբնութեամբ բարին վՄխիթար <ս>աղա մուղդասին և զպատուեալ ծերունին վՖրէրն, որ զօրինակն շնորհեցին, նայլ զիս՝ զողորմելի և զեղկելի ծերս, զփրցփրցուն գծողս և զանարիեստ կապմողս յիշեսցիք ի Տէր, զի և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերո: ա. 103 6

ГЭ, АР—1011—468

**Библия, первая половина XV в.,  
Киликия, последующий владелец Карапет**

Ով սուրբ ընթերցող, յիշեսցիք յաղաթս ձեր զվերջին սրապող վԼարապետ վարդապետն և զծնողսն իւր և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ: ա. 6 6

ՋԼարապետ վարդապետն և զծնողսն իւր յիշեսցիք ի Քրիստոս և դուք յիշեալ լիցիք և վՄարտիրոս բանի սիրող որ զգիրս գրեցի: ա. 175 6

См. также л. 6 б, 82 а, 98 б, 110 а, 151 б, 166 а, 179 б, 276 а, 343 а, 427 б/69 б, 446 б/88 б, 488 б/130 б., записи от имени Карапета выполнены Мартиросом.

119

ИБ, А 16—129

**Шаракноц, XV—XVI вв., переписчик Нерсэс**

**а**

л. 116 а

Ի Յարութեան կիրակիս,  
Եւ հրաշափառ սուրբ Զարկիս,  
Տեսողք յատուրս պապճառիս,  
Զիս յիշեցէք պողորմելիս.  
Ջներսէս պանարժան դպրիս,  
Զգծագրող սուրբ Կառիս՝  
Զըսրբալոյս Շարակնոցիս:

Եւ պծնալոսն մեր արժանի արասցէ մասին սրբոյ. ամէն:

**б**

л. 263 а

ԶԿառնապեալ զգրիչս՝ վներսէս սարկաւազս և պծնալոսն իմ յիշեայ:

В первой записи переписчик представляется чтецом, во второй дьяконом.

120

ИБ, А 17—130

**Шаракноц, XV—XVI вв.,  
поздний переплетчик Григор**

л. 334 а

Զվերջին կապմողս վԳրիգոր սուրանուն արեղան աղաչեմ յիշել ի Տէր, և Սստուած զձեզ յիշէ յիւր միսանգամ գալուստն. ամէն:

121

ИБ, В 47—285

**Книга вопрошений Григора Татёвади,  
XV—XVI вв., переписчик Горг, заказчик Бардулимэос**

л. 391 б

Փառք [...] Գրեցաւ աստուածային գանձարանս որ կոչի Հարցմունք Գրիգորի, վեհիմաստ հեռեկորի և քաջ իմաստասիրի և վարդապետի Հայոց, մանաւանդ ախոյեանի ուղղադաւանիցն և ընդդիմի հարկանող չարափառացն դասուց, առ դուրս Սուրբ Սստուածածնիս և Նախավկայիս Սուրբ Սրբեփանոսի, ձեռամբ բազմամեղ անձին Գորգի, ի վայելումն մանկանց Սիոնի:

Արդ, զվ դասք լուսերամից, որք հանդիպիք ի սմայ տեսութեամբ կամ գաղափարելով և կամ ընթերցմամբ, յիշեցէք ի մեղսաբաւիչ

յաղաթաձեր ստրայոտ սորայ՝ վԲարդոտիմէնու արեղայ և զեռին սորայ՝ վԱստուածաւոր հէրաւերն Սուրբ Առաքելոյս և զըծնաւոյ սորայ՝ վԲորթէ և զմայրն Սրբայիալ և զեղբայրն վԲարունակ և զոյրն վԱսանխաթուն և զիւր որդիին՝ վԿարապետ և զՀայրապետ սարկաւագն և Աստուած ողորմի ասացէի, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

Այլ արդ, անարգս ի սեռս մարդկային ազգի, անպիտանս և անարժանս ի մանկունս եկեղեցոյ, ոչ թէ վասն գրչութեան արհեստից և կամ յարագութեան մտայ և յորդորումն մարանց բռն հարաւ ի հանձարիմաստ և ի բազմահեղ մատենս, այլ վասն սիրոյ և հրամանայ, գերապայծ և երանաշնորհ և պանծալի բաբունապետիս մերոյ՝ Թումայի քաջ հռչակորի, զի բազում անգամ թղթով և պարզամաւ առաւել, և մեհ հարկեցաւ ըստ Կոզէր և ըստ Կիւսափ անպօրութեան մերում աւարտեցաւ:

Այլ և համշիրաւ եղբայրս մեր Գրիգոր, և սայ ևս առաւել խնդրէր, վասն զի Գ (3) հեւոյ այլ ուր էր և ոչ առին յանձն. և մեհ վասն եղբայրական գթոյ սորայ և սրբասէր և մաքուր անձին և բաղձանայ սրտին կաւարտեցաւ զհայցելիս տրաւ:

Դարձեալ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, թէ պարտաւորեմ և թէ ընթերցմամբ՝ անմեղադիր լինիմ սխալանայ գրիս և խռոտութեան. այլ և աղաչեմ զձեզ խնդրել ի Տեառնէ վրոպայումն անլուանալի բազում մեղայ // իմոյ. և դուք յիշեալ լիցիմ առաջի ահեղ արեւնին Քրիստոսի, որ ասէ. Եկայք առ իս ամենայն աշխատողք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ (Մփ. 11, 29):

ա. 392 a

Դարձեալ, աղաչեմ զամենեսեան, որք ընթերցումով կամ արինակէի յիշեցէի ի սուրբ յաղաթաձեր զառաջ յիշեցեալ ստրայոտ սուրբ գրոյս՝ վԲարդոտիմէնու արեղայ և վԱստուածաւոր հէրապետ և զծնողի սոցայ, և զեղբայրսն և զազգն ամենայն առհասարակ. ընդ նմին և զհոգևոր հայրն սոցայ և զուսուցիչն՝ վԿարապետ արեղայ. և ինքն որ Կոտողն է բարեայ, Կայէ ձեզ Կոյր երկնից արքայութիւն. ամէն: Եւ ինձ մեղաւոր Յոհանիսիս Աստուած ողորմի ասացէի, և ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած:

Записи на л. 77 а и 77 б сделаны рукой заказчика Бардулимэоса, на л. 224 б — переписчика Горга. Его же рукой написан и данный ишатакаран, но строки, относящиеся к заказчику, отличаются и почерком, и цветом чернил. Возможно, эти части вписаны Йоҳанэсом, который просит помянуть его в самом конце записи.

ԶԱրագիս անարժան քահանայ և զհանգուցեալ ծնողսն իմ և զոյրն իմ՝ զգնացեալսն առ Քրիստոս, աղաչեմ յիշել և մեղայ մերոյ թողութիւն խնդրել, և որ յիշէ սրտի մտաւ, Քրիստոս Աստուած զինք յիշէ, զի ծաղկի զարդարեցի զսուրբ Կառս Կայս:

ա. 29 б

СПБГУ, Мс. Саус. 3—461

**Йовханнэс Ерзнкаци, Толкование грамматики,  
XVI в., переписчик Кюракос**

- л. 6 б Ոհ, աղաչեմ, վմեղույեալ սորին գրող յիշեան:
- л. 10 б Ոհ, վմեղաւք վառապեալ հոգիս Կիրակ[ոս] աղաչեմ յիշել ի Տէր:
- л. 118 а Ոհ, ոհ, ընդ որս և ես աղաչեմ աղերսանաւք, գրող սորին, յիշել վմեկ հանդերձ ծնողաւք մերաւք ի մեղայ թողութիւն, և յիշողայդ գրանել յԱստուծոյ պողորմութիւն: Եւ սխաղանայ և պակասութիւն պոր ինչ ի գիրս, աղաչեմ չիւնել մեղադրելի, պի միգրս յոյժ շփոթեալ էր, նաև չէր խելկունս ի վերայս:

ИБ, В 1—239

**Ветхий Завет, XVI—XVII вв.,  
переписчик Костандин, заказчик Костандин**

- л. 308 б Զարայաղ սուրբ մարեննիսս՝ Կարբաւէր եպիսկոպոսն Կրէր Կոստանդին և Կծնաւոսն իւր յիշեսցիք ի Տէր. ընդ նոսին և Կիս՝ Կեղկելի գծաւոս ԿԿոստանդին անարժան քահանայ, և որ յիշէ՝ և ինքն յիշեալ լիցի ի Զրիստոսէ Աստուծոյ մերոյ. որ է արինեալ յաւիտեանս. ամէն:

Та же запись в сжатой редакции на л. 235 б.

ИБ, В 1—239

**Ветхий Завет, XVI—XVII вв.,  
последующий владелец Йовханнэс.**

- л. 478 а [Յ]աշխարհէս ըսգայական,  
մարդ մի եղէ ես անպիգան,  
Որ բնաւ չունիմ գործ փրկութեան,  
բան թէ ամենն ամաթական:  
Շոգոյ մարդկան բժշկարան՝  
գիտեմ զայս գիրս պատուական,  
Առնող ծաղիկս քանապան,  
խառնել ի պէլոս փրկութեան:  
Նախնի սղայաւոն արիական՝  
Կրէր Կոստանդին այր պատուական,  
Նախ գնացեալ յաղենական.  
Ճանապարհաւ մեծ փրկութեան,  
էական հայրն ի նման,  
մեկ մի ունի ես սպգական,

Միրյուն լայն վանց գիտութեան,  
 վամէն էր գրոց ասայնջական,  
 Վարդապետ էր փաղարաքան  
 եպիսկոպոս յոյժ սրբական,  
Անդրհասանցս ի մենաստան  
 էր առաջնորդ հաճոյական,  
 Բամից խմբիցն անմարմնական,  
 հոգովն երգէ սաղմոսարան,  
 Դամբարան որ գերեզման,  
 մարմնովն է աստի ի պատիկման:  
 Արդ, ես ծառայս քո անայիտան,  
 Քրիստոս փրկիչ ազգի մարդկան,  
 Պետր կոչեցայ խիստ անարժան,  
Յոհաննէս անուն ըստ մանգութեան:  
 Եւ կու ըղձամ ընթերցման,  
 կարատր յաւետ միշտ գիտութեան,  
 Տոնեալ զգանձս մարմնական՝  
 ստացայ զգիրն ինձ վարժարան:  
 Մեղան հոգոյ անծախական՝  
 ինձ և իմոցն որ յետոյ գան,  
 Գրել ի սիրտս հոգեկան,  
 բոլորն վխաւար անգիտութեան:  
 Բամեալ բոլորք ամենեմեան,  
 որք հանդիպիք այսմ յիշման,  
 Եթէ կարգաւ կայք յաստիճան,  
 թէ ի ճանապարհս իմաստութեան,.  
 Յույժք ինձ գութ ողորմութեան,  
 եւ վայելաղ գրոցս ըստ պատահման,  
 Առնող շընորհըս թողութեան,  
 ի Յիսուսէ Աստուածն բան,  
